ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/7274/02/25 ք. Երևան
24 Հուլիսի 2025թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արման Օհանյանս (այսուհետ նաև՝ Դատարան) ուսումնասիրելով <<ՍԵՅՍՄՇԻՆ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և <<ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության **(այսուհետ նաև՝ Հայցվորներ կամ <<ՍԵՅՍՄՇԻՆ>> ՍՊԸ և <<ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ)** ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության **(այսուհետ նաև՝ Պատասխանող)**՝ թիվ ՀՏՁՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով գնման գործընթացի շրջանակում <<Շին նախագիծ>> ՍՊԸ-ին և <<Սեյսմշին>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի
II
(ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ)

12.07.2025 թվականին՝ Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից վարվող էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով, <<ՍԵՅՍՄՇԻՆ>> ՍՊԸ-ի և <<ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ թիվ ՀՏՁՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով գնման գործընթացի շրջանակում <<Շին նախագիծ>> ՍՊԸ-ին և <<Սեյսմշին>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

14.07.2025 թվականին ժամը 21:16-ին հա. ԵԴ2/7274/02/25 քաղաքացիական գործը Համակարգի միջոցով մակագրվել է դատավոր Ա.Օհանյանին:

15.07.2025 թվականին հա. ԵԴ2/7274/02/25 քաղաքացիական գործը Համակարգի միջոցով հասանելի է դարձել Դատարանի դատավոր Ա.Օհանյանին:

III

(ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ)

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-հոդվածի 2-րդ մասով, 124, 125 և 127 հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. <<ՍԵՅՍՄՇԻՆ>> ՍՊԸ-ի և <<ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ թիվ ՀՏՁՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով գնման գործընթացի շրջանակում <<Շին նախագիծ>> ՍՊԸ-ին և <<Սեյսմշին>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Հետագա դատավարական գործողությունների մասին գործին մասնակցող անձանց ծանուցել լրացուցիչ:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Digitally signed by OHANYAN ARMAN 4014820192
Date: 2025.07.25 13:53:59 AMT

Դատավոր՝ Արման Օհանյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am